ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 մարտի 2016 թվականի N 242 - Ն

ՕԴԱՆԱՎԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱԶԳԵՍՏԻ
ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԿՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ավիացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Սահմանել օդանավի անձնակազմի անդամների համազգեստի նկարագիրը և կրելու կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2016 թ. մարտի 15
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2016 թվականի
մարտի 3-ի N 242 - Ն որոշման

ՕԴԱՆԱՎԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱԶԳԵՍՏԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԿՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են օդանավի անձնակազմի անդամների համազգեստի նկարագիրը և այն կրելու հետ կապված հարաբերությունները:

2. Օդանավի անձնակազմի անդամները համազգեստը կրում են ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ:

3. Համազգեստը պետք է համապատասխանի սույն կարգի պահանջներին և լինի անթերի վիճակում:

4. Ընդհանուր համազգեստի գունային և ոճային չափորոշիչները որոշվում են ավիաընկերության կողմից:

5. Օդանավի անձնակազմը բաղկացած է թռիչքային անձնակազմի անդամներից՝ օդանավի հրամանատար (օդաչու), շտուրման, բորտինժեներ, բորտռադիստ (այսուհետ՝ թռիչքային անձնակազմի անդամներ), և սրահի անձնակազմի անդամներից՝ բորտօպերատոր, բորտուղեկցորդ (այսուհետ՝ սրահի անձնակազմի անդամներ):

II. ԹՌԻՉՔԱՅԻՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՎ ՍՐԱՀԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱԶԳԵՍՏՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

6. Թռիչքային անձնակազմի անդամների և սրահի անձնակազմի անդամների համազգեստները պետք է նախագծվեն համապատասխան ավիաընկերության կողմից:

7. Համազգեստի գործվածքը և կառուցվածքը պետք է լինեն հարմարավետ ու չպետք է խոչընդոտեն անձնակազմի անդամների ծառայողական պարտականությունների կատարմանը:

8. Ավիաընկերությունների կողմից պետք է հաշվի առնվեն տեղական և նշանակման վայրերի կլիմայական ու եղանակային պայմանները՝ կլիմայական փոփոխությունների դեպքում համազգեստի դյուրին համապատասխանեցման նպատակով:

9. Հրամանատարի, 2-րդ օդաչուի, շտուրմանի, բորտինժեների և բորտռադիստի պիջակի թևքերի և վերնաշապիկի ուսադիրների վրա տարբերանշանների առկայության դեպքում դրանք պետք է արտացոլեն կոչումները. հրամանատարի համար՝ չորս ոսկեգույն գծերով, իսկ 2-րդ օդաչուի, շտուրմանի, բորտինժեների և բորտռադիստի համար՝ երեք ոսկեգույն գծերով:

10. Կոշիկները պետք է լինեն հարմարավետ:

11. Մետաղյա կրծքանշանների և այլ պարագաների նախատեսման դեպքում պետք է հաշվի առնվեն անվտանգության նկատառումները:

12. Համազգեստը պետք է լինի քաղաքացիական հագուստից տարբերվող և արտակարգ իրավիճակներում հեշտ ճանաչելի:

13. Սրահի անձնակազմի անդամների համազգեստը կարող է ունենալ ազգային հագուստի առանձին տարրեր:

III. ԹՌԻՉՔԱՅԻՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԵՎ ՍՐԱՀԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱԶԳԵՍՏ ԿՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

14. Համազգեստը պետք է կրել մաքուր, հարդարված և արդուկված վիճակում:

15. Ամառային և ձմեռային համազգեստի անցնելը հայտարարվում է ավիաընկերության կողմից:

IV. ՕԴԱՆԱՎԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱԶԳԵՍՏՆԵՐԻ ՆԿԱՐՆԵՐԸ

16. Սույն բաժնում ներկայացվում են օդանավի անձնակազմի անդամների համազգեստների տարրերի նկարները՝

1) հրամանատարի համար նախատեսված թևքերի վրայի տարբերանշաններ՝ չորս ոսկեգույն գծերով.

2) 2-րդ օդաչուի, շտուրմանի, բորտինժեների և բորտռադիստի համար նախատեսված թևքերի վրայի տարբերանշաններ՝ երեք ոսկեգույն գծերով.

3) հրամանատարի համար նախատեսված ուսադիրներ՝ չորս ոսկեգույն գծերով.

4) 2-րդ օդաչուի, շտուրմանի, բորտինժեների և բորտռադիստի համար նախատեսված ուսադիրներ՝ երեք ոսկեգույն գծերով.

:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ